

2015թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԵՐԻ ԵՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

Համակարգվել է՝

- ՀՀ Լոռու մարզպետի տարեկան (2014թ.) աշխատանքային գործունեության հաշվետվության մշակման և ներկայացման աշխատանքները
- ՀՀ կառավարության 2015թ.-ի գործունեության կատարումն ապահովող միջոցառումների և գերակա խնդիրների նախագծի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առաջարկությունների խմբագրում ըստ պահանջվող ձևաչափի և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ,
- ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի 2014թ տարեկան ամփոփ եւ 2015թ-ի 3-րդ եռամսյակի կտրվածքով վերլուծության մշակման (ըստ ՏԿԱԻՆ ներկայացրած ձևաչափի),
- ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատատակազմի 2014թ. տարեկան, 2015թ կիսամյակային աշխատանքային ծրագրի և կատարողականի գնահատման ակտերը, 2016թ-ի կատարողական ակտի նախագիծը և դրանց ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ,
- (2014թ) մարզպետի գործունեության գնահատման հետ կապված, տեղեկատվության մշակում եւ ներկայացում ՀՀ ՏԿՆԱԻ, ՀՀ ԱԳ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություններ:

2014-2017թթ մարզի զարգացման ծրագրի մասով՝

- ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի մոնիտորինգի տարեկան ամփոփ հաշվետվության մշակման և ՏԿԱԻՆ ներկայացման աշխատանքները
- ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) նախագծի մշակման և ՏԿԱԻ նախարարի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները (հաստատվել է)
- ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. զարգացման ծրագրի 2015թ. ՏԱՊ-ի 1-ին կիսամյակի մոնիտորինգի ամփոփ հաշվետվության մշակման և ՏԿԱԻՆ ներկայացման աշխատանքները

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ

- Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի աշխատանքների վերաբերյալ եռամսյակային վերլուծությունների մշակում և ներկայացում մարզպետին,
- ՀՀ Լոռու մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության եւ վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվության մշակում և ներկայացում ՀՀ ՏԿԱԻՆ

- Առևտրի եւ սպասարկման ոլորտում ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2015թ. կատարվող վարչական հսկողության իրականացում
- Լոռու մարզում տարվա ընթացքում բարերարների, սփյուռքահայ համայնքների, կառույցների, կազմակերպությունների կամ անհատների մասնակցությամբ իրականացված միջոցառումների, ծրագրերի կամ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ներկայացում ՀՀ սփյուռքի նախարարություն:
- Արտաքին կապերի և միջազգային համագործակցության բնագավառի տարեկան աշխատանքների 2016թ. պլանի և ընթացիկ տարվա իրականացված աշխատանքների վերաբերյալ (յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով) հաշվետվությունների մշակումը եւ ներկայացումը ԱԳՆ
- մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնած ՀՀ մարզերի ներդրումային քարտեզի Լոռու մարզի ներդրումային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության մշակման աշխատանքները:
- Եռամսյակային կտրվածքով իրականացվել է ներդրումային ծրագրերի առաջարկների ձեւավորում եւ ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ('Ռոզֆրուդ'՝ 'Չինվան')
- ՀՀ Լոռու մարզում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ինչպես նաև օբյեկտների շինարարության, գործող շինթույլտվությունների, դրանցով նախատեսված ժամկետների վերաբերյալ տեղեկատվության թարմացում և համալրում (ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն)

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԵՐ

Իրականացվել են՝

- մարզի տնտեսվարող սուբյեկտների հետ հանդիպում-քննարկումներ (ՀՀ վարչապետի Լոռու մարզ կատարած այցի ընթացքում եւ այլ), որի ընթացքում տնտեսվարողների կողմից բարձրացված հարցերի եւ խնդիրների վերաբերյալ առաջարկությունների մշակում եւ ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- մասնակցություն մարզպետի նախաձեռնությամբ մարզի ձեռնարկություններ կատարած այցերին
- ակտիվ համագործակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի հետ (պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ համայնքներին իրազեկման և ներգրավածության ընդլայնման նպատակով, համատեղ քննարկումների կազմակերպում, մասնակցություն նրանց կողմից կազմակերպված սեմինարներին)
- աջակցություն «ՆԱՏՖՈՒԴ» ընկերության նախաձեռնությամբ «ՀՀ մարզերում առևտրի և հանրային սննդի ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների վաճառքների խթանման և անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացման» ծրագրի մեր մարզում կազմակերպվող աշխատանքներին
- շարունակվել է աջակցություն ՄԱԱԶԿ-ի արդյունաբերության հիմնադրամի ֆինանսավորմամբ 'Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար. աջակցություն երիտասարդ ձեռներեցներին' պիլոտային ծրագրին (2014-2015թթ-

ի ընթացքում Լոռու մարզի երիտասարդ ձեռներեցներին տրամադրվել է խորհրդատվություն, կազմակերպվել է 6 սկսնակ գործարարների դասընթացներ, որի արդյունքում լավագույն բիզնես առաջարկներ ֆինանսավորվել են)

Առաջարկություններ

- ✓ ակտիվացնել մարզպետարան - ՓՄՁ ԶԱԿ-ի գրասենյակ – համայնքներ - ՓՄՁ սուբյեկտների փոխադարձ կապը
- ✓ հետետեղական աշխատանք տանել էկոնոմիկայի նախարարություն ուղարկված ներդրումային ծրագրերի առաջարկների ուղղությամբ,
- ✓ նախատեսվող Լոռու զարգացման հիմնադրամին ներկայացնելու համար նախապատրաստական աշխատանքներ տանել բիզնես ծրագրերի առաջարկների պատրաստման համար,

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Աջակցություն է ցուցաբերվել

- ՀՀ կառավարության նախաձեռնությամբ եւ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմադրամի կողմից Վանաձորում Տեխնոլոգիական կենտրոնի ստեղծման եւ դրա շրջանակներում կազմակերպված բազմաբնույթ միջոցառումների աշխատանքներին
- Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի (COAF) կողմից նախաձեռնված Սմարթ կենտրոնի ստեղծման աշխատանքներին
- որոշակի աշխատանքներ են տարվել երիտասարդների եւ դպրոցականների ներգավաճությունը ապահովելու տարբեր տիպի նորարարական դրամաշնորհային մրցույթներին եւ ֆորումներին, ուսուցողական դասընթացների կազմակերպման ուղղությամբ

Հաջողությունները

- ✓ 2014-2015թթ-ին տեխնոլոգիական կենտրոնի դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն են ցուցաբերել Վանաձորից 16 թիմեր, որից 3-ի նորարարական բիզնես առաջարկներ հաղթել են, ստանալով համաֆինանսավորում:
- ✓ 'Գիտություն եւ Ինովացիա' միջազգային երիտասարդական ֆորումին մասնակցել են Վանաձորից 2 երիտասարդներ, որոնք 'Լավագույն իննովացիոն գաղափար' նոմինացիայով ստացել են մրցանակներ՝ 2-րդ կարգի դիպլոմներ եւ սերտիֆիկատներ 'Նոր գաղափար' Համառուսաստանյան մրցույթին մասնակցելու հնարավորություն:
- ✓ Հեքլթոն (Յան) Մանկություն 2015՝ նորարար գաղափարների եւ ծրագրավորման մրցույթին մասնակցել են ավելի քան 40 թիմեր, որոնցից վանաձորյան՝ 10: Հաղթող 5 ճանաչված թիմերից 1-ը Վանաձորի թիմ էր:

Առաջարկություններ

Ոլորտում իրականացվող եւ նոր նախաձեռնվող դրամաշնորհային մրցույթների վերաբերյալ մարզի համայնքներում իրազեկում

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- Ապահովել է Լոռու մարզպետարանի lori.mtaes.am պաշտոնական կայքի արդիականացման աշխատանքները
- համայնքների պաշտոնական կայքերի արդիականացման նպատակով կազմակերպվել են սեմինարներ մարզի շուրջ 60 համայնքների ՏՀԿՏ-ների համապատասխան մասնագետների համար
- աջակցություն է ցուցաբերվել մարզպետարանի եւ մարզի 113 համայնքների համար պաշտոնական էլեկտրոնային փոստերի բացման եւ համայնքների հետ պաշտոնական

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն Լոռու մարզի եւ Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի հեպ համագործակցության շրջանակներում

- Թումանյան աշխարհ միջհամայնքային զբոսաշրջության գրասենյակի պաշտոնական բացման արարողության կազմակերպման աշխատանքներին
- խմբում ագրոտուրիզմի զարգացման ծրագրին (վերապատրաստողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ ապրանքանիշի ստեղծում՝ մարզի տեղական արտադրողների եւ ֆերմերների ուսումնասիրության կազմակերպում՝ տեղի մասնագետների Ֆրանսիա գործուղման փաստաթղթերի պատրաստում եւ այլն

Մասնակցություն Ֆրանսիայի Ռիոն Ալպ ռեգիոնի աջակցությամբ իրականացված ծրագրերին

- Էկոտուրիզմի զարգացման շրջանակներում Դսեղի այցելության կենտրոնի բացման արարողության կազմակերպման աշխատանքներին
- Ստեփանավանի տարածաշրջանում քայլքային տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրի կազմակերպչական աշխատանքներին

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության շրջանակներում 2015 թվականին մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում: Այսպիսով՝ շուրջ 43 միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցություն է իրականացվել:

Միջազգային համագործակցության ոլորտում Լոռու մարզը հաջողությամբ իրականացրեց նոր նախաձեռնություն՝ համագործակցության հիմք դնելով Շվեդիայի Ուփսալա նահանգի եւ Լոռու մարզի միջեւ: Շարունակվում է սերտ համագործակցությունը Ֆրանսիայի ՊԱԿԱ, Ռիոն Ալպ ռեգիոնների, Բելառուսի Վիտեբսկ եւ Վրաստանի Աջարիա շրջանների հետ:

Լոռու մարզը հանդիսանում է Ֆրանկոֆոն Ռեգիոնների Միջազգային Ասոցացիայի (AIER) լիիրավ անդամ 2011թ-ի նոյեմբերի 24-ից եւ Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամսյակի շրջանակներում 2015-ին մարզի համայնքներում ակտիվորեն իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Շարունակվել է համագործակցությունը Լոռու մարզի եւ Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեայի (ԵվՏԱ/AER) հետ: Նշենք, որ մարզը Ասամբլեայի լիիրավ անդամ է հանդիսանում 2010թ-ի նոյեմբերի 11-ից: Միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երրորդ նիստի աշխատանքային խումբը հավանության արժանացրեց Ստավրոպոլի երկրամասի հետ տարածաշրջանային փոխշահավետ համագործակցություն սկսելու Լոռու մարզի առաջարկը: ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային կոնֆերանսում Ստեփանավանը ճանաչվել է քաղաքի «Դերային մոդել»։ Ստեփանավանը լավագույն, օրինակելի քաղաք է ճանաչվել նաև որպես ավտոմատացված և էներգախնայող գիշերային լուսավորություն ունեցող քաղաք, որը լուսավորված է գրեթե ամբողջությամբ:

Հայ - ֆրանսիական համագործակցություն

Համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի ՊԱԿԱ (Պրովանս ԱԼՊԵՐ Կոտ Դե Ազուր) ռեգիոնի հետ մի շարք ծրագրեր են իրականացվում: 2015թ-ին ինտենսիվ աշխատանքներ են տարվել ծրագրերի իրականացման ուղղությամբ, ինչպես նաեւ կնքվել է ՊԱԿԱ ռեգիոնի հետ 2015-2017թթ համագործակցության համաձայնագիր: Համաձայնագրի շրջանակներում նախատեսված ծրագրերից 2015թ-ին իրականացվել են 173 000 եվրո արժողությամբ աշխատանքներ: 2015-2017թթ համագործակցության համաձայնագրով նախատեսվում է ընդհանուր 451 000 եվրոյի աշխատանքների իրականացում:

Նշենք, որ ՊԱԿԱ ռեգիոնը հանդիսանում է նաեւ համագործակցության կամուրջ եւ հարթակ Օտ Տեղ դե Պրովանսի (Haute Terre de Provence), Կրիպտի (CRIPT), DSF-ի (Ցավեր առանց սահմանների)-ի, Անասնաբուծության ռեգիոնալ պալատի եւ Լոռու մարզի միջեւ: Այս բազմակողմանի համագործակցության արդյունքում իրականացվում են բավականին արդյունավետ ծրագրեր: Արժանահիշատակ են տուրիզմի, ագրոտուրիզմի, անասնաբուծության, ռաֆիինքի, բնագիտական, թանգարանային եւ կրթական ոլորտներում իրականացվող ծրագրերը:

Տուրիզմի բնագավառ՝

- Երկարատեւ աշխատանքների եւ բազմակողմանի համագործակցության արդյունքում հիմնադրվեց եւ 2015-ին հանդիսավոր բացվեց Թումանյան աշխարհ զբոսաշրջային գրասենյակը, որտեղ վերանորոգման և կահավորման աշխատանքներ են կատարվել, և կենտրոնը այժմ լիարժեք գործունեություն է իրականացնում: Կենտրոնը հիմնադրվել է ՊԱԿԱ, տեղական 7 համայնքների և ՀՀ կառավարության համատեղ ներդրմամբ:
- Ֆրանսիացի մասնագետները Թումանյանի տարածաշրջանում եւ տարածքի կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկությունները բացահայտող, տեսարժան վայրերը պատկերող հարուստ լուսանկարչական նյութ ստեղծեցին, որը դեպի Լոռու մարզ նորանոր տուրիստների ներգրավման շարժառիթ կարող է հանդիսանալ:
- Ֆրանսիայից ժամանած գործընկերները փորձնական ռաֆթինգ իրականացրին՝ նավարկելով Դեբեդ գետով: Նախատեսվում է ուսումնասիրությունների արդյունքում մարզում զարգացնել ռաֆթինգը որպես տուրիզմի այլընտրանքային ճյուղ:
- Նախատեսվում է Ախթալայում հիմնել թանգարան եւ այդ նպատակով Ֆրանսիայից ժամանած մասնագետները այս տարի իրականացրին համապատասխան ուսումնասիրություններ:

Ագրոտուրիզմի բնագավառ՝

- Ֆրանսիայից ժամանած ագրոտուրիզմի մասնագետները Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում անցկացրին ագրոտուրիզմի մասնագետների վերապատրաստման հնգօրյա դասընթաց նախապես ընտրված 8 մասնակիցների համար, որոնք աշնանը մեկնեցին ֆրանսիա եւ մասնակցեցին վերապատրաստման դասընթացների՝ ծանոթանալով տեղական փորձին :

Լոռու մարզը սերտորեն համագորակցում է նաեւ ֆրանսիական **Ռհոն Ալպ ռեգիոնի** հետ:

- Ռհոն Ալպյան Biotop եւ Հայաստանի Թռչնասերների ու Թռչնապահպանների միության էկոտուրիզմի զարգացման համատեղ ծրագրի շրջանակներում Դսեղում կառուցվել եւ աշնանը շահագործման է հանձնվել Թռչնասերների կենտրոնը:
- Ռհոն Ալպ ռեգիոնի Քայլարշավորդների ֆեդերացիայի հետ Ստեփանավանի տարածաշրջանում իրականացվել է քայլարշավորդների ծրագիրը, որը ենթադրում է քայլարշավորդների վերապատրաստողների վերապատրաստում եւ այնուհետև Քայլարշավորդների վերապատրաստման կենտրոնի հիմնում: Վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներին զուգահեռ իրականացվել է նաեւ քարտեզագրում եւ երթուղիների մշակում Ստեփանավանի Ճգնաժամային կառավարման կենտրոնի աշխատակիցների մասնակցությամբ և

Ֆրանսիական կողմի աջակցությամբ զբոսաշրջիկների համար մշակվել է քայլարշավային 16 երթուղի, ինչպես նաև ավարտվել են քարտեզագրման աշխատանքները:

- Այս տարի եւս անցկացվեց G2IA-ի եւ Ռիոն Ալպի համատեղ Օձունի գանձեր ամենամյա ծրագիրը, որը իրենից ներկայացնում է միջհամայնքային տարեկան հանդիպում եւ գյուղմթերքի տոնավաճառ:
- Հունվարին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը հյուրընկալեց Ֆրանսիայի Ռիոն Ալպ ռեգիոնի հայաստանյան ներկայացուցիչ Անահիտ Դավթյանին և Ֆրանսիական AFRAD տուրիստական կազմակերպության տնօրեն Մարտին Շալինյին: AFRAD տուրիստական կազմակերպությունը Ռիոն Ալպի հետ համագործակցությամբ ևս նախաձեռնել է ծրագրեր իրականացնել Լոռու մարզում: Նախատեսվում են կյանքի կոչվել նոր ծրագրեր՝ առավել մեծ թվով Ֆրանսիացի տուրիստների ուղղորդելով Հայաստան:

Մարզի քաղաքների կողմից ակտիվ համագործակցություն է ծավալվում քույր քաղաքների եւ քույր մարզերի հետ: Լոռու մարզպետի գլխավորած պատվիրակության Դմիտրով այցելության շրջանակներում Դմիտրով և Ստեփանավան քաղաքների միջև սեպտեմբերի 24-ին բարեկամական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր տորագրվեց:

2016 թվականին նախատեսվում է շարունակել Վանաձոր քաղաքի համագործակցությունը քույր քաղաքների Բաթումի /Աջարիա/, Կիսլովոդսկ /ՌԴ/, Պոդոլսկ/ՌԴ/, Վիտեբսկ /Բելառուսիա/, Բանյո /Ֆրանսիա/, Փասսադենա /ԱՄՆ/ հետ՝ մշակութային եւ սպորտի բնագավառում: Նախատեսվում է Վանաձորյան մշակույթը ներկայացնել քույր քաղաքներում, ինչպես նաև կազմակերպել համատեղ համերգներ, ցուցահանդեսներ: Քույր քաղաքների հետ համատեղ սպորտային միջոցառումների, ընկերական հանդիպումների և սպորտային հավաքների կազմակերպում:

ԵՄ և այլ դոնոր կառույցների կողմից իրականացվող ծրագրեր

Մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժինն աջակցել եւ ակտիվ մասնակցություն է ունեցել նաեւ **ԵՄ** եւ **այլ դոնոր** կառույցների կողմից իրականացվող ծրագրերի քննարկումներին, կազմակերպչական աշխատանքներին, հանդիպումներին:

- Լոռու մարզում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի թիվը հասնում է շուրջ 15-ի:
- Հայաստան-Վրաստան անդրսահմանային համագործակցություն ծրագրի վերջնական փուլը հաղթահարած ծրագրերից մեկը Լոռու մարզի էկոտուրիզմի զարգացման «Հեծանվավարությունը եւ գյուղական համակցված միջսահմանային զբոսաշրջությունը որպես ինովացիոն մոտեցում անդրսահմանյան համագործակցության խթանման ուղղությամբ» ծրագիրն է: Ծրագրի կրողներից է ՀԿ կենտրոն հասարակական կազմակերպությունը: ԵՄ ներդրումը 225 հազ. եվրո է:
- ԵՄ ֆինանսավորմամբ «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագիրը իրականացվում է CISP իտալական ՀԿ-ի կողմից:

- Եվրոմիությունը Հայաստանում ֆինանսավորում է նաեւ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրը, որը մեկնարկեց 2015-ին եւ որի արժեքը կազմում է 510000 եվրո: Սպիտակի քաղաքապետարանը հանդես է ալիս որպես համաֆինանսավորող: Ծրագրի իրականացնողը «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն է:
- «ՀՀ մարզերում աղքատության նվազեցում տուրիզմի ներդրման միջոցով - հետագա զարգացումներ և կայունության ապահովում» ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ թիրախային մարզերում աղքատության նվազեցման գործընթացներին: Տևողությունը. 8 Հունվար, 2015 - 7 Հունվար, 2017: ԵՄ ներդրում. 200,000 €: Իրականացնող. ՍՈՍԵ բարեգործական հասարակական կազմակերպություն:
- Դեռևս 2013 թվականից ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, սերտ համագործակցելով ԵՄ Հայաստանյան գրասենյակի հետ, ԵՄ նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է «Աջակցություն ՏԿՆ-ին, Աջակցություն տարածքային զարգացման գործընթացներին» ծրագիրը՝ հոլանդական ECORYS կազմակերպության աջակցությամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դիակոնիա բարեգործական կազմակերպության աջակցությամբ մարզում իրականացվում են բազմաթիվ բարեգործական միջոցառումներ՝ միտված հատկապես կարիքավոր եւ առողջական եւ այլ խնդիրներ ունեցող քաղաքացիներին աջակցությանը: Հիմնադրամի ֆինանսավորմամբ մարզի համայնքներում իրականացվել են շուրջ 88.418 մլն դրամ արժողությամբ բարեգործական՝ տնտեսական զարգացման եւ սոցիալական ուղղվածությամբ ծրագրեր. նախորդ տարի ներդրումը կազմում էր 73 մլն դրամ: Դրանցից են՝

- Դսեղի բժշկական կենտրոնին համակարգչային տեխնիկայի եւ բժշկական սարքավորումների տրամադրումը 3.403 մլն.:
- Վանաձորի թիվ 1 գիշերօթիկ հատուկ օժանդակ դպրոցում իրականացվել է ջերմոցի կառուցում, հրուշակագործության դասընթացների համար նախատեսված սենյակի հիմնում, ինչպես նաեւ տրամադրվել են հատուկ բժշկական տրինաժորներ հատուկ կարիք ունեցող երեխաների համար: Ծրագրի ընդհանուր արժեքը 4.93 մլն դրամ է:
- Շարունակվում է Թումանյան քաղաքի ծերերի կենտրոնի վերանորոգումը՝ ընդհանուր արժեքը 17 մլն դրամ է:
- Սարամեջ եւ Մեծ Պարնի համայնքներում իրականացվել են կարտոֆիլի եւ ցորենի (6.89 մլն դրամ), Ջրաշենում՝ հաճարի ծրագրեր (2 մլն դրամ):
- Վանաձոր, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան քաղաքներում տրամադրվել է 2200 արկղ սնունդ 22 մլն արժողությամբ:
- Ձմեռային ամիսներին Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Վանաձոր քաղաքներում 200 երեխաների տրամադրվել է տաք հագուստ 6 մլն արժողությամբ:

- Ընթացքի մեջ է Ալավերդու տուբերկուլոզի կենտրոնի վերանորոգումը. 7.9 մլն ընդհանուր արժողությամբ:
- Տաշիրի պոլիկլինիկայում իրականացվում են 4.21 մլն արժողությամբ դուռ-լուսամուտի փոխման եւ եւ ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ:
- Դպրոցական ծրագիր՝ հագուստ, պայուսակ, գրենական պիտույքներ 222 երեխաների՝ 6.5 մլն դրամ:

Վորլդ Վիժըն Ինթերնեյշնըլ կազմակերպություն

- Կազմակերպության կողմից համայնքներում շարունակվել են ավելի քան 198.7մլն դրամ ծավալով ծրագրերի իրականացումը Լոռու մարզի 30համայնքներում, այդ թվում՝ Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 համայնքներում՝ 84.4մլն դրամ, Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 114.3մլն դրամ ծրագրեր: Իրականացվել են առողջապահական ծրագրեր (մարզի ամբուլատորիաների վերանորոգում, բժշկական պարագաների, համակարգչային տեխնիկայի և կահույքի տրամադրում, դասընթացների կազմակերպում և իրականացում), «Զբոսաշրջության զարգացման և երիտասարդների ձեռներեցության աջակցման եւ «Տնտեսական զարգացման» տեղական արժեշղթայի զարգացում ծրագրերը:

UNICEF-ի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից շարունակվել են իրականացվել կրթական, երեխաների պաշտպանության, արտակարգ իրավիճակների պատրաստվածության եւ փախստականների եւ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար կենսապայմանների բարելավման ծրագրեր:

- Պերինատալ ծառայության բարելավման եւ նորածիններին մատուցվող բժշկական ծառայություններն արդյունավետ կազմակերպելու նպատակով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է ճառագայթային տաքացուցիչ:
- 9 առողջապահական հաստատություններում հիմնվել են «Ծնողական կրթության կենտրոն»-ներ եւ «մայրության դպրոցներ»:
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի ընթացքին ծանոթանալու և տեղում վերլուծություններ կատարելու նպատակով հունիսի 10 և 11-ին Լոռու մարզում էին հիմնադրամի փոխներկայացուցիչ Ռուդոլֆավ Ռժեհակը եւ այլոք, ովքեր հունիսին Լոռու մարզպետարանում հանդիպում ունեցան մարզպետ Արթուր Նալբանդյանի, մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանի, մարզպետարանի մի շարք վարչությունների և բաժինների ներկայացուցիչների հետ:

Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) բարեգործական կազմակերպությունը ընդլայնում է գործունեությունը մարզի համայնքներում. Ներկայումս շաահոու համայնքներն են Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Վահագնի, Դեբեդ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Անտառամուտ, Մեծ Այրում, Արեւածագ եւ Աքորի համայնքները:

- «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից Դսեղ-Դեբեդ համայնքների ճամփաբաժանի հարակից տարածքում (հարավային կողմում) կառուցվում է Սմարթ Կենտրոն, որը բարձր տեխնոլոգիաների և լավագույն փորձառության վրա հիմնված մեթոդների միջոցով կրթական-զարգացողական հնարավորություններ է ստեղծելու

տարածաշրջանի համայնքների բնակչության համար: Ներկայումս Կենտրոնը գտնվում է շինարարական աշխատանքների փուլում:

Փրկենք երեխաներին միջազգային կազմակերպության կողմից մարզպետարանի հետ համագործակցությամբ Լոռու մարզի 3 համայնքներում՝ Շամլուղ, Զրաշեն եւ Լեռնավան, իրականացվել է դպրոցահեն նախակրթարանների հիմնման ծրագիրը:

Զարգացման Սկզբունքներ ՀԿ-ի և Հեյֆեր Հայաստանի ՀԳՈԿՄ (CARMAC) ծրագիրը իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական ԾԻԳ-ի հետ համատեղ: Ծրագիրը աջակցում է համայնքներում արոտագտագործողների կոոպերատիվների ստեղծմանը, մատուցում է խորհրդատվական ծառայություններ: Կոոպերատիվներին տրամադրվում է տրակտոր, հավաքիչ-մամլիչ, խոտհնձիչ, խոտհավաք, գութան, կուլտիվատոր, շարքացան և այլ գյուղատնտեսական տեխնիկա:

- Գյուղտեխնիկայի գնման համար կոոպերատիվներից պահանջված 50% համաֆինսավորման գումարի 30%-ը տրամադրում է Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ-ը, իսկ 20%-ը տվյալ կոոպերատիվը:
- 2015 թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրի շրջանակներում Հեյֆեր Հայաստանը կատարել է 787 637 285 դրամի ուղղակի ներդրում: Լոռու մարզում ծրագիրը իրականացվել է Լորուտ, Աթան, Դսեղ, Շամուտ, Ահնիձոր, Քարինջ, Մարց, Մեծ Պարնի գյուղերում:
- **ԱՐԴԻ-ն (Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն)** հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2013թ.-ի սեպտեմբերին և ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից: Ծրագիրը իրականացվում է Հայաստանում Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի հետ համատեղ: Նպատակն է գյուղական համայնքներում խթանել գյուղական զբաղվածությունը՝ տնտեսական զարգացման խոչընդոտները վերացնելու ճանապարհով: Ծրագիրն աջակցություն է տրամադրում գյուղատնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն:
- 2015 թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրի շրջանակներում ի լրումն այլ արդյունքների (ուսուցում, համայնքների մրցունակցության հետազոտություն) ստեղծվել են 36 նոր բիզնեսներ, իրականացվել են 13 համայնքային ենթակառուցվածքների ծրագրեր, ստեղծվել են 292 աշխատատեղեր, որից 215 կարճաժամկետ:
- Լոռու մարզում ծրագիրը իրականացվել է Դեբեդ, Դսեղ, Եղեգնուտ, Չկալով, Ահնիձոր, Լորուտ, Աթան, Շամուտ, Շնող, Թեղուտ, Նեղոց, Արճիս, Մեծ Այրում, Ճոճկան, Ախթալա, Քարկոպ, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Լուսաղբյուր գյուղերում:
- Վորլդ Վիժն Ինթերնեշնլի Հայաստանյան մասնաճյուղի կողմից 2015-ի առաջին կիսամյակում շուրջ 30 համայնքներում իրականացվել են 143,2 մլն դրամի ծրագրեր. հիշատակելի է մարզի քաղաքային համայնքների պոլիկլինիկաներին համակարգչային տեխնիկայի տրամադրումը:
- **«Հայ ակնաբուժության նախագիծ»** հիմնադրամը մոտ ապագայում նախատեսում է Սպիտակ քաղաքում ակնաբուժական տարածաշրջանային կենտրոն հիմնել, որը կծառայի ոչ միայն Լոռու, այլև Շիրակի և Արագածոտնի մարզերի ազգաբնակչությանը: «Հայ ակնաբուժության նախագիծ» հիմնադրամը Լոռու

մարզում 2005թ.-ից իրականացնում է «Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագիրը:

- Լոռու մարզի Ջրաշեն և Լեռնավան համայնքներում «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և նշյալ համայնքների ներդրմամբ հիմնվեցին նախադպրոցական կրթության կենտրոններ: Նախաձեռնությունը իրագործվեց Լոռու մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում: «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության-2» ծրագրի շրջանակներում Ջրաշենի և Լեռնավանի դպրոցների մասնաշենքերում նորոգվել ու կահավորվել են դասասենյակներ, սանհանգույցներ, նախադպրոցական կենտրոնները համալրվել են անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, դիդակտիկ նյութերով: Ի դեպ ծրագրի շրջանակներում նախակրթարան բացվեց նաև Շամլուղ համայնքում:
- Հսկայական աշխատանքներ են տարվում ջրամատակարարման համակարգերի բարելավման ուղղությամբ: Ասիական զարգացման բանկի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերի միջոցներով «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 սպասարկվող համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար նախատեսվել է 1.311.14մլն դրամ: Աշխատանքները ընթացքի մեջ են:
- Ջրամատակարարման որակի բարձրացմանը միտված հաջորդ խոշոր ծրագիրը իրականացվում է Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում: «Լոռի-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում KFW գերմանական վարկային ծրագրի կողմից նախատեսվել է իրականացնել 1մլրդ 629մլն 942հազ. դրամի աշխատանքներ: Աշխատանքները ընթացքի մեջ են:
- Արձանահիշատակ է Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնման ծրագիրը: Այն մեկնարկել է 2013 թ-ին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Էլ.հասարակության եւ մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի միջոցներով: Ծրագիրը հանդիսանում է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի նախաձեռնությունը: Հայտարարվել են մրցույթներ տարածքի շինարարության եւ համակարգչային սարքավորումների մատակարարման համար: Իրականացվել են տեխնոլոգիաների ոլորտի համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթներ, որի արդյունքում Վանաձորյան 4 թիմեր հաղթող են ճանաչվել:
- Նշենք, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը Համաշխարհային Բանկի օժանդակությամբ ձեռնարկել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը, որով նախատեսվում է վերակառուցել նաև 220 կՎ «Լոռի» և 110 կՎ «Թումանյան-1,2» օդային էլեկտրահաղորդման գծերը:
- ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվում են մարզի բնապահպանական կարելուր խնդիրների քննարկումներ, հասարակական լսումներ մարզպետարանում եւ մարզում գործող 3 բնապահպանական տեղեկատվական Օրիուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Վանաձորի քաղաքապետարանը «Առդա»

Բարեգործական հիմնադրամի և «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի հետ համատեղ «Տարոն-3» թաղամասում գտնվող կիսակառույց շենքի վերակառուցման միջոցով նախատեսում է կառուցել 12 բնակարան՝ ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար:

Դեպքանների և այլ պաշտոնատար այրերի այցեր Լոռու մարզ

- Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեպքան **Պյոտոր Սվիտալսկին**
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպա **Մաթիաս Քիսլերը**
- Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան **Ջովաննի Ռիչուլլին**
- Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրե Ափ ռեգիոնալ խորրդի նախագահի 1-ին տեղակալ պարոն **Պատրիկ Ալմանդը**
- Հայաստանում Ֆրանսիայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Ժան Ֆրանսուա Շարպանտիյինը**